ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

28.08.2018թ.

Արձանագրություն թիվ 1

1. ՀԱԱՀ Տնտեսագիտական և Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետների միավորման հարցի վերաբերյալ.

1.1. ՀԱԱՀ Տնտեսագիտական և Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետների վերամիավորման ու Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ ձևավորելու հարցը քննարկել ՀԱԱՀ գիտական խորհրդում և դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին՝ հաստատելու որոշումը:

1.2. Առաջարկել ՀԱԱՀ գիտխորհրդին Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կազմում հաստատել հետևյալ ամբիոնները.

- Ագրոբիզնեսի կառավարման,
- Տվյալագիտության՝ միավորելով Ինֆորմատիկայի և մաթեմատիկական մեթոդների և Վիճակագրության և բիոմետրիայի ամբիոնները,
- Ֆինանսների և հաշվապահության՝ միավորելով Հաշվապահական հաշվառման և աուդիտի և Ֆինանսներ և վարկի ամբիոնները,
- Ագրարային էկոնոմիկայի՝ միավորելով Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Տնտեսագիտության տեսության, Ապրանքագիտության և մարքեթինգի ամբիոնները,
- Ագրարային քաղաքականության և խորհրդատվության,
- Հասարակական գիտությունների՝ միավորելով Հայոց պատմության և փիլիսոփայության, իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնները:

2. ՀԱԱՀ Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի և Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետների միավորման հարցով.

2.1. Ստեղծել Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ՝ միավորելով Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի և Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետները:

2.2. Հանձնարարել դեկաններին քննարկել ամբիոնների վերակազմավորման ու միավորման հարցը և մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ:

3. ՀԱԱՀ որոշ ամբիոնների միավորման հարցի վերաբերյալ.

3.1. Միավորել Ագրոնոմիական ֆակուլտետի Ագրոէկոլոգիայի և Անտառագիտության ամբիոնները՝ ստեղծելով Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոն:

3.2. Միավորել Ագրոնոմիական ֆակուլտետի Հայոց և ռուսաց լեզուների ամբիոնը օտար լեզուների ամբիոնի հետ՝ ստեղծելով Հայոց և օտար լեզուների ամբիոն:

3.3. Միավորել Հայոց պատմության և փիլիսոփայության, Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնները՝ ստեղծելով Հասարակական գիտությունների ամբիոն նորաստեղծ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կազմում:

3.4. Պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետում Սննդի արդյունաբերության սարքավորումների, կաշվի և մորթու տեխնոլոգիայի ամբիոնը անվանակոչել Սննդի արդյունաբերության սարքավորումների ամբիոն, իսկ կաշվի և մորթու տեխնոլոգիայի առարկաները տեղափոխել Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոն:

3.5. Երաշխավորել նշված առաջարկությունները ՀԱԱՀ գիտական խորհրդում քննարկելու և հաստատելու համար:

4. Ակադեմիական պարտքերի մարման գործընթացի վերաբերյալ.

4.1. Հանձնարարել ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների դեկաններին սահմանված ժամկետում և սահմանված կարգով կազմակերպել ակադեմիական պարտքերի մարման գործընթացը:

5. ՀԱԱՀ քոլեջներում ընդունելության վիճակի վերաբերյալ.

5.1. Դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ ՀԱԱՀ մասնաճյուղերի քոլեջների թափուր մնացած տեղերի տեղափոխման հարցով:

6. ՀԱԱՀ քոլեջներում դասավանդող դասախոսական կազմի պատշաճ ընտրության վերաբերյալ.

6.1. ՀԱԱՀ քոլեջներում դասավանդող դասախոսների ընտրությունը կատարել ամբիոնի վարիչների հետ համատեղ քննարկման արդյունքում՝ հիմք ընդունելով նաև ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքները (պատասխանատուներ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյան, Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջի տնօրեն Ա.Հովհաննիսյան):

7. ՀԱԱՀ քոլեջներում բուժկետի և բուֆետի անհրաժեշտության մասին.

7.1. Հանձնարարել վարչատնտեսական դեպարտամենտի պետ-պրոռեկտորի պաշտոնակատար Պ. Էֆենդյանին քննարկել և ներկայացնել ՀԱԱՀ-ում, ինչպես

նաև քոլեջներում բուժկետի համար տարածք հատկացնելու և քոլեջներում բուֆետի ստեղծման հնարավորությունները:

8. **ՀԱԱՀ քոլեջներում դասաժամերի տևողության կրճատման հարցի վերաբերյալ.**

8.1. 2018-2019թթ ուս. տարում ՀԱԱՀ քոլեջներում դասաժամերի տևողությունը սահմանել 70 րոպե: ՀԱԱՀ ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման չափորոշիչում կատարել 4-րդ կետի խմբագրում և ներկայացնել գիտխորհրդի առաջիկա նիստի հաստատմանը:

9. **ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի վերաբերյալ.**

9.1. Հանձնարարել ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Ս. Դավեյանին ըստ ժամանակացույցի պատշաճ կազմակերպել ՀԱԱՀ ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացը՝ հաշվի առնելով նախկինում առկա բոլոր բացթողումները և հատուկ ուշադրություն դարձնելով առկա խնդիրների ու դրանց հնարավոր լուծումների վրա:

10. **Ուսումնական գործընթացում կատարվող որոշ փոփոխությունների վերաբերյալ.**

10.1. Հանձնարարել դեկաններին ու ամբիոնների վարիչներին՝ կազմակերպել դասախոսությունների վարումն ինտերակտիվ մեթոդով, բացառել բացակայությունների լրացումները տետրերով, ստուգողական, ինքնուրույն, կուրսային, դիպլոմային աշխատանքները ներկայացնել բացառապես տպագիր ձևով, կրճատել կուրսային աշխատանքների ծավալը և վերանայել թեմաները, քննություններն ու ստուգարքներն անցկացնել մշակված թեսթերով:

10.2. Հանձնարարել դեկաններին մինչև ս.թ. սեպտեմբերի 3-ը ամբիոնի վարիչների հետ քննարկել և ուսանողների գնահատման բազմագործոնային համակարգում բարձրացնել հաճախումների տոկոսային մասնաբաժինը:

10.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին ուսումնասիրել ուսումնական գործընթացի հետ կապված կանոնակարգերը, կատարել համապատասխան կետերի փոփոխություններ և ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

10.4. Հանձնարարել դեկանատներին մինչև ս.թ. սեպտեմբերի 10-ը ՏՏԻԾ կենտրոնին ներկայացնել ուսուցողական կուրսերի (ընդհանուր համակարգչային գիտելիքներ, ցուցադրական նյութերի պատրաստում, դասավանդման ինտերակտիվ մեթոդ և այլն) կարիք ունեցող դասախոսական անձնակազմի ցուցակները:

10.5. Հանձնարարել ՏՏԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Վ. Մելքոնյանին՝ համապատասխան ամբիոնների հետ կազմակերպել անհրաժեշտ նյութերի մուտքագրումը համալսարանի կայք՝ բարձրացնելով

ուսանողների իրազեկման մակարդակը, ինչպես նաև կազմակերպել համապատասխան դասընթացներ:

11. Արտասահմանյան համալսարաններում դասախոսների հնարավոր վերապատրաստումների, ուսանողների փոխանակման, ակադեմիական շարժունության հնարավորությունների մասին.

11.1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին և լեզվի ուսուցման կենտրոնի տնօրեն Ռ. Շահինյանին մինչև ս.թ. սեպտեմբերի 15-ը մշակել դասախոսական անձնակազմի համար օտար լեզվի տիրապետման շարունակական հավաստագրման մոտեցումներ և ժամանակացույց: Դասախոսական անձնակազմի և ուսանողության համար կազմակերպել համապատասխան դասընթացներ օտար լեզվի իմացության տարբեր մակարդակներով:

11.2. Հանձնարարել դեկաններին լինել հետևողական և արտերկրում վերապատրաստված դասախոսական անձնակազմի վերադարձից հետո ֆակուլտետում կազմակերպել զեկուցում, և ներկայացնել նրանց ձեռք բերած գիտելիքը, փորձն ու հմտությունը, հնարավոր փոփոխությունները, նորամուծությունները կամ բարելավման ուղիները:

12. Համալսարանում կուրսը կրկնող կամ համալսարանում վերականգնվող ուսանողների վարձավճարների սահմանման գործընթացի վերաբերյալ.

12.1. Հանձնարարել դեկանատներին և հաշվապահությանը՝ ուսանողների վարձավճարների սահմանման և ընդունման գործընթացն իրականացնել ըստ համապատասխան կանոնակարգի:

13. ՀԱԱՀ-ում ծխելու դեմ խիստ պայքար ծավալելու վերաբերյալ.

13.1. Հանձնարարել ՏՏԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Վ. Մելքոնյանին մինչև ս.թ. սեպտեմբերի 3-ը դիզայների հետ պատրաստել ՀԱԱՀ-ում ծխելու դեմ խիստ պայքար ծավալելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվական, ուսուցողական նյութեր:

13.2. Հանձնարարել դեկաններին՝ աշխատանքներ ծավալելու ամբիոնների վարիչների և ուսանողության հետ՝ ծխելու դեմ խիստ պայքար ծավալելու վերաբերյալ:

14. 2018-2019թթ ուս. տարվա առաջին կուրսեցիներին ՀԱԱՀ-ում պատշաճ կերպով ընդունելու վերաբերյալ.

14.1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին և ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Ս. Դավեյանին ս.թ. սեպտեմբերի 3-ին կազմակերպել առաջին կուրսեցիների ընդունելության գործընթացը. դիմավորել ՀԱԱՀ մեծ

դահլիճում, ներկայացնել համալսարանում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, ձևավորել ուսանողակենտրոն միջավայր:

15. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգում քննությունների և ստուգարքների անցկացման էլեկտրոնային համակարգի ներդրման վերաբերյալ.

15.1. Հանձնարարել հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի պաշտոնակատար Դ. Պետրոսյանին 2017-2018թթ ուս տարվա առարկաների պարտքերի վերահանձման գործընթացը նախկին կարգով կազմակերպել և ավարտել մինչև ս.թ. դեկտեմբերի 30-ը:

15.2. Հանձնարարել հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի պաշտոնակատար Դ. Պետրոսյանին և ՏՏԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Վ. Մելքոնյանին 2018-2019թթ ուս. տարվանից սկսած հեռակա ուսուցման համակարգում ներդնել քննությունների և ստուգարքների անցկացման էլեկտրոնային համակարգ ըստ համապատասխան կարգի (ուսանողների քննությունների և ստուգարքների ընդունում թեսթերով, հատուկ կահավորված և էլեկտրոնային վերահսկումով լսարաններում, հատուկ ID-ով, վերահանձման երկու հնարավորության ընձեռում՝ 10 օր ընդմիջումներով):

16. ՀԱԱՀ Անատոմիայի ամբիոնին կից գյուղատնտեսական Կենդանիների անատոմիական թանգարանի կազմավորման համար ԿԳ նախարարությանն ուղղված նամակի արագ ձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ.

16.1. Հանձնարարել վարչատնտեսական դեպարտամենտի պետ-պրոռեկտորի պաշտոնակատար Պ. Էֆենդյանին և Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկան Ա. Վարդանյանին սեղմ ժամկետում ձևակերպել և ԿԳ նախարարություն ներկայացնել ՀԱԱՀ Անատոմիայի ամբիոնին կից գյուղատնտեսական Կենդանիների անատոմիական թանգարանի կազմավորման համար անհրաժեշտ տարածքի հատկացման խնդրանքով նամակը:

17. Հեռակա ուսուցման համակարգի ուսման 5.5 տարի ժամկետի կրճատման մասին.

17.1. Տվյալ հարցին անդրադառնալ ուսումնական պլանների վերանայման ընթացքում, երբ պարզ կլինի նաև հեռավար ուսուցման վերաբերյալ ՀՀ ԿԳ նախարարության դիրքորոշումը:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ԱՎԱԳՅԱՆ